



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 12

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2015 թվականի դեկտեմբերի 25-ից

ԳՅՈՒՏԵՐ	4, 111
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>6, 113</i>
 ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	 12, 119
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>14, 121</i>
 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	 17, 124
<i>Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին</i>	<i>19, 126</i>
 ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	 21
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկմա ն նշանների մասին</i>	<i>23</i>
 <i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	 <i>93</i>
 ՑՈՒՑԻՉՆԵՐ	 102
 ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	 104
 ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ	 127

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. (011) 597-537 հայտերի ընդունման բաժին
Հեռ. (011) 597-535 տեղեկատվական-
տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. (374 11) 597-537 отдел приема заявок
Тел. (374 11) 597-535 отдел информационно-
технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 111
Сведения о выданных патентах.....	6, 113
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	12, 119
Сведения о выданных патентах.....	14, 121
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	17, 124
Сведения о зарегистрированных промышленных образцах.....	19, 126
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	21
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	23
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	93
УКАЗАТЕЛИ.....	102
СООБЩЕНИЯ.....	104
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	127

CONTENTS

INVENTIONS.....	4, 111
Information on granted patents.....	6, 113
UTILITY MODELS.....	12, 119
Information on granted patents.....	14, 121
INDUSTRIAL DESIGNS.....	17, 124
Information on registered industrial designs.....	19, 126
TRADE MARKS.....	21
Information on registered trade marks and service marks	23
Information on renewal of effect of trademark registration	93
INDEXES.....	102
REPORTS.....	104
TWO-LETTER CODES.....	127

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը A գյուտի արտոնագիր B արտոնագրաունակության մասին եզրակացություն
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	գյուտի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
72	գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) **2015.01** (11) **2972** (13) **A**

A01B 35/00

(21) **AM20140079** (22) **24.06.2014**

(72) Նորիկ Ավետիսի Բազիկյան (AM), Պարզև Արամայիսի Տոնապետյան (AM), Արամայիս Մյասնիկի Եսոյան (AM)

(73) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) **Լանջերի մշակման փխրիչի աշխատանքային օրգան**

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես, լանջերի հողի մշակության տեխնիկական միջոցներին:

Լանջերի մշակման փխրիչի աշխատանքային օրգանն ունի ուղղանկյունաձև կանգնակ, հարթահատ թաթիկ և կտրող եզրով թև: Հարթահատ թաթիկը կանգնակի հետ ունի կարգավորման հնարավորություն, իսկ թևի ստորին մասում ամրակցված է հողի շերտավոր մշակման խոփ: Բարձրացվում է լանջերի հողի փխրեցվող շերտի ջրակայունությունը, կրճատվում են էներգածախսերը, 3 նկ.:

(51) **2015.01** (11) **2973** (13) **A**

A61K 31/00

(21) **AM20150103** (22) **05.08.2015**

(72) Սարգիս Մաթևոսյան (AM)

(73) «Լիկվոր» ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան 7/9 (AM)

(54) **Օտիտի բուժման բաղադրանյութ**

(57) Գյուտը վերաբերում է առողջապահության բնագավառին, մասնավորապես՝ օտիտի բուժման դեղագործական բաղադրանյութերին: Բաղադրանյութը ներառում է հակասնկային, հակամանրէային, հակաբորբոքային բաղադրամասեր, ցավազրկող բաղադրամաս լիդոկաինի հիդրոքլորիդի տեսքով և որպես օժանդակ նյութեր՝ գլիցերին և պրոպիլենգլիկոլ:

Որպես հակասնկային բաղադրամաս ներառում է վորիկոնազոլ, հակամանրէային բաղադրամաս՝ ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ, իսկ հակաբորբոքային՝ բետամետազոնի

դիպրոպիոնատ, ընդ որում, բաղադրամասերը վերցված են հետևյալ հարաբերակցությամբ (զանգվ.%)՝ վորիկոնազոլ՝ 0,2 - 0,3, ցիպրոֆլոքսացինի հիդրոքլորիդ՝ 0,3 - 0,35, բետամետազոնի դիպրոպիոնատ՝ 0,02 - 0,03, լիդոկաինի հիդրոքլորիդ՝ 2,15 - 2,5, գլիցերին՝ 1,115 - 1,2, պրոպիլենգլիկոլ՝ 95,5 - 96,5:

Ընդլայնվում է օտիտի բուժման բաղադրանյութերի տեսականին:

(51) **2015.01** (11) **2974** (13) **A**

B60Q 9/00

(21) **AM20150025** (22) **09.03.2015**

(72) Ռոբերտ Զալիբեկի Զիջյան (AM)

(73) Ռոբերտ Զալիբեկի Զիջյան, 0014, Երևան, Դավիթ Անհաղթի 4, բն. 30 (AM)

(54) **Տրանսպորտային միջոցի թույլատրված արագության խախտումը կանխող համակարգ**

(57) Տվյալ գյուտը վերաբերում է երթևեկության անվտանգությունն ապահովող սարքերին:

Տրանսպորտային միջոցի թույլատրված արագության խախտումը կանխող համակարգն ունի ճանապարհահատվածի եզրին տեղադրվող կանխող ազդանշանի հաղորդման բլոկ և տրանսպորտային միջոցի վրա տեղադրվող կանխող ազդանշանի ընդունման բլոկ: Ընդ որում ազդանշանը հաղորդող բլոկն ունի կոդավորված ազդանշանի գեներատոր և գեներատորի ելքին միացված հաղորդիչ անտենա: Սարքի ազդանշանի ընդունման բլոկն ունի հաջորդաբար միացված ընդունիչ անտենա, ազդանշանի կոդավերծանիչ և նախազգուշացնող ազդանշանի հանգույց: Սարքի ազդանշանը հաղորդող բլոկի գեներատորը տվյալ ճանապարհահատվածում թույլատրված արագության կոդավորված ազդանշանի գեներատոր է: Սարքի ազդանշանի ընդունման բլոկը լրացուցիչ ունի տրանսպորտային միջոցի ընթացիկ արագության GPS չափիչ հանգույց և արագության խախտումը որոշող հանգույց, որի ելքի ազդանշանը հաղորդվում է նախազգուշացնող ազդանշանի հանգույցին, տրանսպորտային

միջոցի ավտոմատ արգելակման հանգույցին և արագության խախտումը արձանագրող հանգույցին, որի ելքի ազդանշանը հաղորդվում է ճանապարհային ոստիկանության հետ կապի հաղորդիչ անտենային:

Կանխվում է տրանսպորտային միջոցի շարժման թույլատրված արագության սահմանի խախտումը ճանապարհի ամբողջ երկայնքով, նկ.1:

(51) 2015.01 (11) 2975 (13) A
C01F 7/00

(21) AM20140075 (22) 20.06.2014

(72) Վոամ Հակոբի Խաչատրյան (AM)

(73) Վոամ Հակոբի Խաչատրյան, 0089, Երևան, «Մայակ» թաղ. 32, բն. 12 (AM)

(54) Ալյումինի հիդրօքսիդի կամ օքսիդի և ջրածնի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է անօրգանական քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ ալյումինի հիդրօքսիդի կամ օքսիդի և ջրածնի ստացման եղանակներին և կարող է կիրառվել օպտո- և լազերային տեխնիկայում, միաբյուրեղների աճեցման համար, ինչպես նաև ջրածնային էներգետիկայում:

Մետաղական ալյումինը փոխազդում են ջրի հետ, առաջացած ալյումինի հիդրօքսիդը և ջրածինն անընդհատ հեռացնում են ռեակցիայի միջավայրից: Ալյումինը վերցնում են 99,99% մաքրությամբ ձուլակոճղի կամ փոշու ձևով, փոխազդում իրականացնում են ակտիվարար առկայությամբ pH-ի 12,5-14,0 արժեքում ռեակցիայի խառնուրդի տաքացմամբ 85-120°C ջերմաստիճանում: Առաջացած ալյումինի օքսիդի ջրային նստվածքն առանձնացնում են վակուումային զտմամբ, լվանում գերմաքուր ջրով, որից հետո այն չորացնում 150-180°C ջերմաստիճանում՝ ստանալով ալյումինի հիդրօքսիդ, կամ չորացնում են 1200°C ջերմաստիճանում՝ ստանալով ալյումինի օքսիդ (a-Al₂O₃): Առաջացած ջրածինն անջատում են վակուումային արտածգմամբ պալադիումային թաղանթի միջոցով: Որպես ակտիվարար օգտագործում են 50-150գ/լ սկզբնական կոնցենտրացիայով վերցրած ալյումինի չհագեցած կոմպլեքսային միացություններ՝

ալյումինի աքվակոմպլեքս, ալյումինի հիդրօքսոկոմպլեքս, ալյումինի օքսիթթվային կոմպլեքս կամ ալյումինի նիտրիդ:

Բարձրացվում է եղանակի տեխնոլոգիամիտությունը, արտադրողականությունը, արգասիքների մաքրությունը և իջեցվում է դրանց ինքնարժեքը:

(51) 2015.01 (11) 2976 (13) A

C01F 7/00

C01B 3/00

(21) AM20140076 (22) 20.06.2014

(72) Վոամ Հակոբի Խաչատրյան (AM)

(73) Վոամ Հակոբի Խաչատրյան, 0089, Երևան, «Մայակ» թաղ. 32, բն. 12 (AM)

(54) Ալյումինի հիդրօքսիդի և օքսիդի խորը մաքրման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է գերմաքուր նյութերի ստացման բնագավառին, մասնավորապես՝ ալյումինի հիդրօքսիդի և օքսիդի խորը մաքրման եղանակներին, և կարող է կիրառվել լազերային և օպտոտեխնիկայում օքսիդային միաբյուրեղների աճեցման գործընթացներում:

Ալյումինի հիդրօքսիդի և օքսիդի լուծույթը ենթարկում են թթվային մշակման, անընդհատ խառնելով ավելացնում են ազոտական թթվի լուծույթ՝ մինչև pH-ի 3 արժեքը, ապա ավելացնում են ամոնիակի ջրային լուծույթ՝ մինչև pH-ի 10 արժեքը, ապա՝ նորից ազոտական թթվի լուծույթ՝ մինչև pH-ի 5 արժեքը: Դրանից հետո լուծույթը ենթարկում են էլեկտրադիալիզի, որն անցկացնում են 4 փուլով. առաջին փուլում հոսանքի ուժը 27Ա է, լարումը՝ 5Վ, երկրորդ փուլում հոսանքի ուժը 5Ա է, լարումը՝ 70Վ, երրորդ փուլում հոսանքի ուժը 1Ա է, լարումը՝ 600Վ, չորրորդ փուլում հոսանքի ուժը 0,3Ա է, լարումը՝ 1500Վ: Էլեկտրադիալիզի հետ միաժամանակ լուծույթը մշակում են նանովայրկյանական էլեկտրամագնիսական իմպուլսներով (HEMI), որոնք ունեն հետևյալ պարամետրերը. 1-1,5 մՎտ՝ իմպուլսների կրկնման 1000Հց հաճախությունում, իմպուլսի տևողությունը 10⁻¹⁰-10⁻⁹ վայրկյան է:

Բարձրացվում է էլեկտրադիալիզի մաքրման աստիճանը և արտադրողականությունը:

(51) 2015.01 (11) 2977 (13) A

C03B37/00

C03B3/00

(21) AM20150056 (22) 30.04.2015

(72) Սոկրատ Գրիգորյան (AM), Արթուր Ազիզբեկյան (AM), Անտոն Բեգլակովսկի (RU), Սարո Մելքումյան (AM), Էդիկ Գրիգորյան (AM), Ավետիք Ղուլյան (AM), Արթուր Հակոբյան (AM), Սերգեյ Սմիրնով (RU), Եվգենի Բեգլակովսկի (RU), Դենիս Բորովկով (RU)

(73) «Արգել» ՓԲԸ (AM)

(54) **Բնական բազալտից թելքի արտադրության եղանակ և դրա իրականացման կայանք**

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ բազալտից թելքի արտադրության եղանակին և դրա իրականացման կայանքին:

Բազալտի ապարը հալեցնում են 1540-1640°C ջերմաստիճանի ներքո գուռային վառարանում և ձևավորում են հալված բազալտի երեք շերտ՝ ստորին բյուրեղացված անշարժ շերտ, սակավաշարժուն միջանկյալ շերտ և վերին շերտ, որից հիդրոփականի միջոցով ելքային համասեռ հալույթը ֆիդերային համակարգի հատակին տեղադրված ճեղքավոր քարերի և լրացուցիչ տաքացվող ճեղքավոր քարերի անցուղիով հիդրոստատիկ ճնշման տակ լցվում է կորզանային սնուցիչ, որտեղից էլ կազմավորված թելքը մատուցվում է փաթաթվող ապարատ: Բազալտային թելքի անընդհատորեն ձգման կայուն պրոցեսի ռեժիմում, ինչպես նաև կոպիտ թելքի բեռնման ռեժիմում նախատեսված է կցափող-ակտիվարար մեկ կամ երկու ճեղքով՝ մեկ ռեժիմից մյուսին ավտոմատ կերպով անցնելու հնարավորությամբ:

Ապահովվում է գործընթացի անընդհատությունը, բարձրացվում է բազալտի հալույթի և թելքի որակը, մեծացվում է արտադրողականությունը, նվազեցվում է արտադրանքի ինքնարժեքը, 2 անկախ կետ, 4 նկ.:

(74) Ալեքսանդր Նահապետյան

(51) 2015.01 (11) 2978 (13) A

C30B 29/00

C04B 35/00

(21) AM20140077 (22) 20.06.2014

(72) Վոան Հակոբի Խաչատրյան (AM)

(73) Վոան Հակոբի Խաչատրյան, 0089, Երևան, «Մայակ» թաղ. 32, բն. 12 (AM)

(54) **Շափյուղայի միաբյուրեղների աճեցման բովախառնուրդի ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է միաբյուրեղների աճեցման բնագավառին, մասնավորապես՝ հալույթից շափյուղայի ծավալային միաբյուրեղների աճեցման համար բովախառնուրդի ստացման եղանակներին, և կարող է կիրառվել օպտո- և լազերային տեխնիկայում: Ալյումինի օքսիդի (Al_2O_3) փոշին հալվելանյութերի առկայությամբ ենթարկում են մեխանիկական խտացման, ապա բարձրաջերմաստիճանային թրծաթողման: Որպես ալյումինի օքսիդի փոշի օգտագործում են ալյումինի օքսիդի գամմա ձևափոխությունը ($\gamma-Al_2O_3$), որպես հալվելանյութեր՝ բովախառնուրդի զանգվածի հաշվարկով 5,0-10,0% նանոբեմիտ, 0,7-1,0% ալյումինի հիդրօքսիդիտրատ և 0,001-0,003% բորաթթու, մեխանիկական խտացումն իրականացնում են իզոստատիկ շառավղային մամլման մեթոդով:

Բարձրացվում է բովախառնուրդի պատրաստման գործընթացի տեխնոլոգիա-միտությունը և արտադրողականությունը, նվազեցվում է բովախառնուրդում խառնուկների պարունակությունը, ինչպես նաև իջեցվում է շափյուղայի ծավալային միաբյուրեղների աճեցման համար բովախառնուրդի ինքնարժեքը:

(51) 2015.01 (11) 2979 (13) A

E01C19/00

(21) AM20150113 (22) 09.09.2015

(72) Ռոբերտ Ալեքսանդրի Մեծլումյան (AM), Լեոնիդ Մարտիրոսի Սաժինյան (AM), Կամո Վլադիմիրի Դավթյան (AM), Ռազմիկ Ալեքսանդրի Մեծլումյան (AM), Վարդգես Սարգսի Հայրապետյան (AM)

(73) Ռոբերտ Ալեքսանդրի Մեծլումյան, 0052, Երևան, Թբիլիսիի խճ. նրբ. 1, բն. 24 (AM), Լեոնիդ Մարտիրոսի Սաժինյան, 0052, Երևան, Թբիլիսիի խճ. նրբ. 2, բն. 14 (AM), Կամո Վլադիմիրի Դավթյան, 0070, Երևան, Եր.Քոչարի 21, բն. 88 (AM)

(54) Բազմաֆունկցիոնալ ճանապարհաշինական մեքենա

(57) Գյուտը վերաբերում է ճանապարհաշինական մեքենաներին, մասնավորապես՝ փողոցի բանուկ մասը մայթից տարանջատող եզրաքարերի տեղադրման համար նախատեսված մեքենաներին:

Բազմաֆունկցիոնալ ճանապարհաշինական մեքենան ունի կրող շրջանակի վրա տեղակայված բեռնասլաք իր դարձի և դուրսքաշման մեխանիզմներով, բեռնաբարձիչ իր բռնիչով և բռնիչի ուղղաձիգ առանցքի նկատմամբ դարձի ու տեղաշարժի մեխանիզմներով, բարձր ճնշման հիդրոպոմպ, բանվորական մարմնի բաք և կառավարման վահանակ: Մեքենան լրացուցիչ ունի կրող շրջանակի վրա տեղակայված խրամափորիչի հանգույց: Խրամափորիչի հանգույցը կազմված է բարձակային թմբկավոր ռոտորից, ռոտորի պտտման շարժաբերից և ռոտորը տրանսպորտային դիրքից աշխատանքայինի փոխադրման մեխանիզմից: Մեքենայի գծային տեղաշարժի մեխանիզմներն իրականացված են հիդրոլիանների տեսքով, իսկ դարձի և պտույտի մեխանիզմները՝ հիդրոշարժիչների տեսքով, որոնցից յուրաքանչյուրը կապված է կառավարման վահանակի և հիդրոպոմպի հետ:

Ընդլայնվում են մեքենայի ֆունկցիոնալ հնարավորությունները, ապահովվում է աշխատանքային կատարող օրգանների միօրինականացումը, 3 նկ.:

(51) 2015.01 (11) 2980 (13) A

E04F19/00

(21) AM20150091 (22) 14.07.2015

(72) Վոլոդյա Արամայիսի Ոսկանյան (AM)

(73) Վոլոդյա Արամայիսի Ոսկանյան, 0005, Երևան, Արցախի 8, բն. 10 (AM)

(54) Սալիկների բաժանարար

(57) Գյուտը վերաբերում է շինարարությանը, մասնավորապես՝ սալիկների տեղադրելու ժամանակ օգտագործվող բաժանարարներին:

Սալիկների բաժանարարն ունի կորացված ծայրերով նույն հաստության վեց ուղղանկյուն պրիզմայի տեսքով թևեր: Չորս թևերը

փոխադրված խաչվում են կենտրոնում: Իրար համառանցք երկու թևերն իրականացված են ուղղանկյուն պրիզմայի տեսքով, իսկ խաչի մաս կազմող մյուս երկու թևերը միասին ունեն Ս-աձև պրիզմայի տեսք: Ուղղանկյուն պրիզմայաձև մի թևին վերևից ամրացված են Ս-աձև պրիզմա կազմող երկու թևեր: Ս-աձև պրիզմայի թևերի ներքին բացվածքը փոքր է լծորդված թևերի ներքին բացվածքից:

Խաչաձև ուղղանկյուն պրիզմայի թևերի կողային և ստորին եզրերն ու Ս-աձև պրիզմա կազմող թևերի ստորին եզրերն ունեն թեք կտրվածքներ:

Ընդլայնվում են բաժանարարի կիրառման հնարավորությունները, 40 նկ.:

(51) 2015.01 (11) 2981 (13) A

F03G 4/00

(21) AM20140073 (22) 03.06.2014

(72) Լևոն Մուրադի Մուրադյան (AM), Մուրադ Լևոնի Մուրադյան (RU), Ժաննա Լևոնի Սեդրակյան (RU)

(73) Լևոն Մուրադի Մուրադյան, 0070, Երևան, Ե. Քոչար 17, բն. 26 (AM), Մուրադ Լևոնի Մուրադյան, 117556, Մոսկվա, Վարշավսկայա 70/3, բն. 34 (RU), Ժաննա Լևոնի Սեդրակյան, 117556, Մոսկվա, Վարշավսկայա 70/3, բն. 34 (RU)

(54) Գեոթերմալ էներգիան էլեկտրական էներգիայի կերպափոխման սարք

(57) Գյուտը վերաբերում է գեոթերմալ էներգիայից էլեկտրական էներգիայի ստացմանը, երբ ջերմային էներգիայի սկզբնաղբյուր են հանդիսանում հետմագմատիկ ստորգետնյա ջերմային դաշտերը:

Սարքը տեղակայվում է հորատանցքում և ունի հորատանցքի պատերն ամրացնող միջոց, որի ստորին մասը պարունակում է աշխատանքային հեղուկ, շոգետուրքին, որը մուտքի և ելքի խողովակաշարերով հերմետիկորեն միացված է հորատանցքին և գեներատոր, որը կինեմատիկորեն միացված է շոգետուրքին: Մուտքի և ելքի խողովակաշարերն ունեն ճնշման կափույր: Ելքի ճնշման կափույրը տեղադրված է շոգեկաթսայի կափարիչի վրա, իսկ ելքի

խողովակաշարը շարունակվում է կաթսայի մեջ՝ դրան առանցքասիմետրիկ, ստեղծելով գլանի փոխարկվող տարածք: Ելքի խողովակաշարի կաթսայի ներսում գտնվող հատվածը պատրաստված է երկշերտ և շերտերի միջև տեղադրված է ջերմամեկուսիչ: Կաթսայի կափարիչն ունի օղակաձև ակոս: Կաթսայի շոգեգոյացման և գոլորշու գերտաքացման հատվածների միջև տեղադրվում է օղակաձև բաք:

Բարձրացվում է էներգիայի կերպափոխման արդյունավետությունը, 3 նկ.:

(51) **2015.01** (11) **2982** (13) **A**
F04F 7/00

(21) **AM20140061** (22) **12.05.2014**

(72) Էդուարդ Պետրոսի Աշխյանց (AM)

(73) Էդուարդ Պետրոսի Աշխյանց, 0025, Երևան, Սայաթ-Նովայի 37, բն. 42 (AM)

(54) **Հիդրավիկական բաբան**

(57) Գյուտը վերաբերում է հիդրոտեխնիկային, մասնավորապես հիդրավիկական բաբանների կառուցվածքին և կարող է օգտագործվել ջրամատակարարման ցանցերում:

Հիդրավիկական բաբանն ունի սնման խողովակ, բանվորական տուփ, հարվածող և մղման փականներ, ջրաօդային ամբար և մղման խողովակ: Բանվորական տուփի մեջ՝ ծայամասում ամրակցված է առնվազն մեկ սնամեջ ռետինե գնդակ:

Բարձրացվում է հիդրավիկական բաբանի արդյունավետությունը, 1 նկ.:

(51) **2015.01** (11) **2983** (13) **A**
G01R 27/00

(21) **AM20150104** (22) **06.08.2015**

(72) Բորիս Մամիկոնյան (AM), Խորեն Մամիկոնյան (AM)

(73) Բորիս Մամիկոնյան, 3103, Գյումրի, Ն. Շնորհալի 25, բն. 24 (AM), Խորեն Մամիկոնյան, 3103, Գյումրի, Ն. Շնորհալի 25, բն. 24 (AM)

(54) **Էլեկտրամեկուսիչ նյութերի դիէլեկտրական կորուստների անկյան տանգենսի չափման եղանակ**

(57) Ըստ էլեկտրամեկուսիչ նյութերի դիէլեկտրական կորուստների անկյան տանգենսի չափման եղանակի, հսկվող օբյեկտի սեղմակներից մեկը միացնում են ընդհանուր հաղորդալարին, հսկվող օբյեկտին հաջորդաբար միացնում են միևնույն դիմադրությամբ հիմնական և լրացուցիչ ռեզիստորներ, լրացուցիչ ռեզիստորի սեղմակներին միացնում են միաբևեռ էլեկտրական փոխանջատիչի մեկական անշարժ հպակների սեղմակները: Այդ միացումներով ստացված չափողական երկբևեռանին միացնում են փոփոխական հոսանքի լարման աղբյուրին: Չափում են փոխանջատիչի շարժական հպակի և հսկվող օբյեկտի լարումների միջև փուլային շեղման անկյունը փոխանջատիչի երկու դիրքերում և որոշում են հսկվող օբյեկտի դիէլեկտրական կորուստների անկյան տանգենսը գյուտի հայտում առաջարկվող բանաձևով:

Պարզեցվում է էլեկտրամեկուսիչ նյութերի դիէլեկտրական կորուստների անկյան տանգենսի չափման գործընթացը, բարձրացվում է չափման ճշգրտությունը, նկ. 2:

(51) **2015.01** (11) **2984** (13) **A**
G01R 27/00

(21) **AM20150107** (22) **10.08.2015**

(72) Բորիս Մամիկոնյան (AM), Խորեն Մամիկոնյան (AM)

(73) Բորիս Մամիկոնյան, 3103, Գյումրի, Ն. Շնորհալի 25, բն. 24 (AM), Խորեն Մամիկոնյան, 3103, Գյումրի, Ն. Շնորհալի 25, բն. 24 (AM)

(54) **Դիէլեկտրական կորուստների անկյան տանգենսի որոշման սարք**

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրաչափողական տեխնիկային և կարող է օգտագործվել պինդ մեկուսիչ նյութերի, հեղուկ դիէլեկտրիկների դիէլեկտրական կորուստների անկյան տանգենսը բարձրավոլտ լարումով չափելու համար:

Դիէլեկտրական կորուստների անկյան տանգենսի որոշման սարքն ունի սինուսոիդային փոփոխական հոսանքի լարման սնուցման

աղբյուր, բարձրավիճակ տրանսֆորմատոր, որի ցածր լարման փաթույթը միացված է սնուցման աղբյուրին, իսկ բարձր լարման փաթույթն ունի լրացուցիչ արտանցիչ, հիմնական ռեզիստոր, երկու փոփոխական լարումների փուլերի տարբերության չափիչ, հաշվիչ հարմարանք:

Տրանսֆորմատորի բարձր լարման փաթույթի առաջին հիմնական արտանցիչն իրար հետ հաջորդաբար միացված փորձարկվող օբյեկտի և հիմնական ռեզիստորի միջոցով միացված է երկրորդ հիմնական արտանցիչին և ընդհանուր հաղորդալարին: Փուլերի տարբերության չափիչի առաջին մուտքը միացված է հիմնական ռեզիստորի և փորձարկվող օբյեկտի ընդհանուր կետին, երկրորդ մուտքը՝ տրանսֆորմատորի բարձր լարման փաթույթի լրացուցիչ արտանցիչին, իսկ ելքը՝ հաշվիչ հարմարանքին: Սարքն ունի նաև հիմնական ռեզիստորի դիմադրությանը հավասար դիմադրությամբ լրացուցիչ ռեզիստոր, որն էլեկտրական բանալու միջոցով զուգահեռ միացված է հիմնական ռեզիստորին, իսկ հաշվիչ հարմարանքը որոշում է դիէլեկտրական կորուստների անկյան տանգենսը տրված բանաձևի միջոցով:

Բարձրացվում է դիէլեկտրական կորուստների անկյան տանգենսի որոշման ճշգրտությունը, 2 նկ.:

(51) **2015.01** (11) **2985** (13) **A**
G01R 27/00

(21) **AM20150110** (22) **24.08.2015**

(72) Բորիս Մամիկոնյան (AM), Խորեն Մամիկոնյան (AM)

(73) Բորիս Մամիկոնյան, 3103, Գյումրի, Ն. Շնորհալու 25, բն. 24 (AM), Խորեն Մամիկոնյան, 3103, Գյումրի, Ն. Շնորհալու 25, բն. 24 (AM)

(54) **Փայտանյութի խոնավության չափման եղանակ**

(57) Ըստ փայտանյութի խոնավության չափման եղանակի փայտանյութի փորձանմուշը տեղադրում են ունակային կերպափոխիչի էլեկտրոդների միջև: Ունակային կերպափոխիչին հաջորդաբար միացնում են երկու ռեզիստոր, որոնցից երկրորդի արտանցիչներին միացնում են միաբևեռ էլեկտրական փոխանջատիչի անշարժ հպակները: Այդ միացումներով ստացված չափողական երկբևեռանին սնում են բարձրահաճախային փոփոխական հոսանքով: Չափում են փոխանջատիչի շարժական հպակի և ունակային կերպափոխիչի լարումների միջև փուլային շեղման անկյունը փոխանջատիչի երկու դիրքում: Համապատասխան բանաձևով հաշվում են ունակային կերպափոխիչի ունակությունը և ունակային կերպափոխիչի ունակության ստացված արժեքով որոշում փայտանյութի խոնավությունը:

Պարզեցվում է փայտանյութի խոնավության չափման գործընթացը, բարձրացվում է խոնավության չափման ճշգրտությունը, 2 նկ.:

*ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ*

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը U օգտակար մոդելի արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչ(ները)
54	օգտակար մոդելի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
72	օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) **2015.01** (11) **429** (13) **Ս**
A01G13/00
 (21) **AM20150052U** (22) **17.04.2015**
 (72) Աշոտ Սաֆարյան (AM), Վալտեր Աթանեսյան (AM)
 (73) «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 105 (AM)
 (54) **Ծառերի տնկիների պաշտպանիչ ցանկապատ**
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է գյուղատնտեսության բնագավառին և կարող է օգտագործվել քաղաքային, անտառային և բանջարաբոստանային տնտեսություններում:
 Ծառերի տնկիների պաշտպանիչ ցանկապատն ունի թեք տեղադրված, իրար միակցված համանման երեք ձողերից կազմված հիմնակմախք, ձողերի ստորին հատվածամասերը սրածայր են ու փոխազուցավոր, և կատարված են համապատասխան դիրքում սևեռման հնարավորությամբ, իսկ ձողերի վերին ծայրամասերը կորացված են: Ցանկապատն ունի երեք լրացուցիչ ձող, ձողերն իրար միակցված են վերին փոքր և ստորին մեծ տրամագիծ ունեցող օղակներով, օղակները կազմված են երկու կեսից, ընդ որում, մեկ ծայրով դրանք միակցված են միմյանց հողակապով, իսկ մյուսով՝ փականքով, ձողերը տեղակայված են օղակների պարագծով՝ իրարից հավասար հեռավորության վրա, սրածայր ձողերը կոշտ ամրակցված են օղակներին արտաքին կողմից: Լրացուցիչ ձողերն արտաքին կողմից հողակապով միակցված են ստորին օղակին: Լրացուցիչ ձողերի վերին հատվածները տեղակայված են վերին օղակի ներսում, ընդ որում, յուրաքանչյուր լրացուցիչ ձողն ունի իրեն հողակապով միակցված փորակ ունեցող լծակ, որը կատարված է վերին օղակին ամրակցված հեղույսային միացության միջոցով համապատասխան դիրքում սևեռման հնարավորությամբ:
 Ապահովվում է ծառերի ուղղաձիգ աճը, պաշտպանում է հարվածներից, 1 նկ.:

(51) **2015.01** (11) **430** (13) **Ս**
B64D 9/00
 (21) **AM20150117U** (22) **22.09.2015**
 (72) Եգոր Համբարյան (AM)
 (73) Եգոր Համբարյան, 0052, Երևան, Զ. Սարկավագի 54/4, բն. 27 (AM)
 (54) **Կործանիչ ինքնաթիռի ֆյուզելաժի փոխադրման տարա**
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է ավիացիային, մասնավորապես՝ ինքնաթիռի փոխադրման տարաներին, և կարող է օգտագործվել տարբեր փոխադրամիջոցներով ՄիԳ-29 կործանիչ ինքնաթիռի և դրա մոդիֆիկացիաների փոխադրման համար:
 Տարան պատրաստված է պողպատյա պրոֆիլներից և ունի ֆերմային կառուցվածք, երկու շրջանակ, կոշտության կողեր, շրջանակների հորիզոնական կողմերով և կոշտության կողերով կազմավորված հիմք: Շրջանակներից յուրաքանչյուրն ունի վերամբարձ կռունկով բարձրացման և կառանման օղակներ: Տարան լրացուցիչ ունի վերամբարձ կռունկով բարձրացման և կառանման օղակներով վեց շրջանակ, շրջանակների ուղղաձիգ կողմերով և կոշտության կողերով կազմավորված պատեր և պատերի միջոցով հիմքին միակցված վերին հիմք՝ կազմավորված շրջանակների հորիզոնական կողմերով և կոշտության կողերով: Շրջանակներից առաջինը և յոթերորդը հենակային են և ունեն ֆյուզելաժի հենման տարրեր, հենման ու սևեռակման պրոֆիլային հեծաններ, իսկ չորրորդ, հինգերորդ, վեցերորդ և ութերորդ շրջանակները հանգուցային են և ունեն ֆյուզելաժի ամրակցման տարրեր ու պրոֆիլային հեծաններ: Երկրորդ և երրորդ շրջանակները կատարված են տարայի ամրության և կոշտության ապահովման համար: Կոշտության կողերը միակցված են հիմքերին, պատերին և շրջանակներին: Շրջանակների վերին հեծաններն ու վերին կոշտության կողերը, վերին հիմքի կոշտության կողերը, չորրորդ, հինգերորդ ու վեցերորդ շրջանակների ֆյուզելաժի ամրակցման տարրերը հանովի են:

Ապահովվում է ծանր տրանսպորտային ինքնաթիռներով փոխադրման հնարավորությունների արդյունավետ օգտագործումը, նվազեցվում է մոնտաժման աշխատանքների ծավալը, 15 նկ.:

(51) 2015.01 (11) 431 (13) U
C25B 1/00

(21) AM20150102U (22) 05.08.2015
(72) Կարապետ Ռուբենի Ջոգարյան (AM)
(73) Կարապետ Ռուբենի Ջոգարյան, 0070, Երևան, Երվանդ Քոչարի 3, բն. 41 (AM)
(54) **Ջրածնի ստացման սարք**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է էլեկտրաքիմիական արդյունաբերությանը, մասնավորապես՝ ջրածնի և թթվածնի ստացման սարքերին:

Սարքն ունի երկբևեռ էլեկտրոդներ, ջրի տարողություն և դրան խողովակով միակցված ջրածնի և թթվածնի կուտակման անոթ: Տարողությունը միակցված է անոթի խողովակին իր վերին մասում տեղակայված մետաղյա հաղորդչի միջոցով: Երկբևեռ էլեկտրոդներն իրականացված են միմյանց նկատմամբ բացակով՝ զուգահեռ տեղակայված մետաղյա թիթեղների տեսքով: Բացակներում կիպ տեղակայված են դիէլեկտրական սալիկներ: Սարքը լրացուցիչ ունի ջրածնի կուտակման քանակի տվիչ, ջրածնի սպառումը վերահսկող տվիչ, էլեկտրական հոսանքի ծախսը վերահսկող տվիչ, տարողությանը և մետաղյա թիթեղներին միակցված ջրի պոմպ, դրան միակցված էլեկտրական օդափոխիչ և էլեկտրական վերահսկիչ հանգույց: Էլեկտրական վերահսկիչ հանգույցը միակցված է մետաղյա թիթեղներին, մետաղյա հաղորդչին, անոթի մուտքի խողովակի վրա տեղակայված ջրածնի կուտակման քանակի տվիչին, անոթի ելքի խողովակի վրա տեղակայված ջրածնի սպառումը վերահսկող տվիչին, տարողությունը մետաղյա թիթեղների հետ միակցող խողովակի վրա տեղակայված էլեկտրական հոսանքի ծախսը վերահսկող տվիչին և էլեկտրական օդափոխիչին: Մետաղյա թիթեղները պատրաստված են չժանգոտվող պողպատից,

դիէլեկտրական սալիկները՝ կաուչուկից, իսկ մետաղյա հաղորդիչը պղնձից է:

Նվազեցվում է էներգածախսումը, բարձրացվում է սարքի աշխատանքի արդյունավետությունը, 1 նկ.:

(51) 2015.01 (11) 432 (13) U
E21F 13/00

B64B 1/00
(21) AM20150070U (22) 02.06.2015
(72) Հրանտ Ալոյան (AM), Ռոբերտ Գաբրիելյան (AM), Գևորգ Գասպարյան (AM), Արմեն Գուլումյան (AM)
(73) «Գապէքս» ՍՊԸ (AM)
(54) **Աերո-ճոպանային տրանսպորտային համակարգ**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է տրանսպորտային միջոցներին:

Աերո-ճոպանային տրանսպորտային համակարգն ունի իրար միակցված օդապարիկ, բալաստային տարողություն, բեռնատար խուց և քարշող սայլակ: Համակարգը քարշող ճոպանի միջոցով միակցված է գետնին տեղակայված քարշող կարապիկին իր շարժաբերով: Քարշող ճոպանը միակցված է քարշող սայլակին: Համակարգի բալաստային տարողության, բեռնատար խցի և քարշող սայլակի գումարային զանգվածը հաստատուն է և հավասար օդապարիկի ամբարձիչ ուժի 95-105%-ին:

Բարձրացվում են հուսալիությունն ու բեռնատարողությունը, նվազեցվում է քամու ազդեցության տակ մեծ ամալիտուդայով ճոճվելու հավանականությունը, 1 նկ.:

(74) Ռուբեն Մանասերյան

(51) 2015.01 (11) 433 (13) U
G08G 1/00

(21) AM20140146U (22) 10.01.2013
(85) 23.10.2014
(86) PCT/RU2013/000013, 10.01.2013
(87) WO 2014/058340, 17.04.2014
(31) 2012142911, (32) 08.10.2012, (33) RU

(72) Օլեգ Լեոնիդովիչ Դյագիլև (RU), Անդրեյ Վլադիմիրովիչ Սալով (RU), Ֆելիքս Զինովյևիչ Էմդին (RU)

(73) Ակցիոներնոյե Օբշչեստվո «Պրոդվոդստվեննոյե Օբյեդինենիե «Ուրալսկիյ Օպտիկո-Մեխանիչեսկիյ Զավոդ» Իմենի Է. Ս. Յալամովա» (RU)

(54) **Հետիոտնային լուսացույց**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է լուսային ազդանշանման տեխնիկային, մասնավորապես՝ լուսադիոդներով հետիոտնային լուսացույցներին և ունի ազդանշանային սարքի ինֆորմատիվությունը բարձրացնող լրացուցիչ մոդուլների համալիր:

Հետիոտնային լուսացույցն ունի ճառագայթման ազդանշանային աղբյուրներով հիմնական մոդուլներ՝ կատարված լուսադիոդների հիմքով, կոնտրոլեր, սնող լարման աղբյուր և ճառագայթման ազդանշանային աղբյուրներով, առնվազն, մեկ լրացուցիչ մոդուլ: Լրացուցիչ մոդուլը տեղակայված է հետիոտնային անցումի ճանապարհային ծածկույթում՝ հետիոտնային անցումի տեղամասում հոծ կամ ընդհատվող գծի ստեղծման հնարավորությամբ և լույս է ճառագայթում հիմնական մոդուլների հետ համաժամ:

Հետիոտներն ապահովվում են լուսացույցի վառվող ազդանշանի մասին, ճանապարհների անվտանգությունը բարձրացնող լրացուցիչ տեղեկատվությամբ, 2 նկ.:

(74) Էդուարդ Նահապետյան

(51) **2015.01** (11) **434** (13) **U**
G09B 9/00

(21) **AM20150018U** (22) **24.02.2015**

(72) Ռադիկ Վանիկի Վանունց (AM)

(73) «Ռադվան տեխնոլոգիա» ՍՊԸ, 0029, Երևան, Սիլիկյան թաղ. 5-րդ փող. 58 (AM)

(54) **ՀՄՄ-2-ի համալիր վարժասարք**

(57) ՀՄՄ-2 հետևակային մարտական մեքենայի համալիր վարժասարքն ունի հրահանգչի, դինամիկ տախտակամածներով մարտական և կառավարման ապարատաժրագրային մոդուլներ, մարտական և կառավարման մոդուլներում տեղակայված էլեկտրոնային և մեխանիկական իմիտատորներ, դինամիկ տախտակամածների եռաչափ և համաժամ շարժումն ապահովող շարժիչ-ռեդուկտորներ: Շարժիչ-ռեդուկտորները կապված են հրահանգչի մոդուլի համակարգիչների հետ: Վարժասարքը լրացուցիչ ունի կողային դիտասարքի տեսքով իրականացված հինգ իմիտատոր: Իմիտատորներից երեքը տեղակայված են մարտական մոդուլում՝ կրակային վարժությունների կատարման դիպուկության և թիրախների հետազոտման ապահովման հնարավորությամբ, իսկ երկուսը՝ տեղակայված են կառավարման մոդուլում՝ մեքենավարման ճշգրտության ապահովման հնարավորությամբ:

Բարձրացվում է ուսուցման արդյունավետությունը, կրճատվում է ուսուցման ժամկետը, 2 նկ.:

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՆՄՈՒՇՆԵՐ**

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի**

11	վկայագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը S արդյունաբերական նմուշի վկայագիր
21	հայտի համարը
22	հայտի ստացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
24	գրանցման թվականը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
51	արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը (ները)
54	արդյունաբերական նմուշի անվանումը
55	արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)
72	հեղինակը(ները), երկրի կոդը
73	իրավատերը(երը), հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին

(51) 02-07 (11) 377 (13) S
(21) 20150014 (22) 28.04.2015
(72) Նարինե Գևորգյան (AM)
(73) Նարինե Գևորգյան, Երևան, Գ. Նժդեհի
13/2, քն. 3 (AM)
(54) Ճարմանդ (3 տարբերակ)
(55)



1.1



1.2



1.3



2.1



R

2.2



3.1



3.2

- (51) 09-01 (11) 378 (13) S
 (21) 20150031 (22) 31.08.2015
 (72) Աննա Տեր-Եսայան (AM)
 (73) «Վան-Չարտեր» ՍՊԸ, Երևան, Զաքյան 3,
 ք. 84 (AM)
 (54) Շի2
 (55)



1.1



1.2



1.3



1.4



1.5



1.6



1.7

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային և սպասարկման նշաններին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը
740	արտոնագրային հավատարմատար

Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) 20150401 (111) 23603
(220) 25.03.2015 (151) 10.11.2015
(181) 25.03.2025

(730) Հյուլիթ-Փեքարդ Դիվելոփմենթ Քամփնի,
Լ.Փ. Տեխաս նահանգի ՄՊԸ, US

(442) 17.07.2015

(310) 86/416,214 (320) 06.10.2014 (330) US
(540)

HPE

(511)

դաս 9. համակարգչային ապարատային արտադրանք, համակարգչային սերվերներ, ցանցային սերվերներ, համակարգչային ծրագրային արտադրանք և համակարգչային ծայրամասային սարքեր. համակարգչային ցանցային ապարատային արտադրանք, կենտրոնական պրոցեսորներից բաղկացած համակարգչային տվյալների պահման համակարգեր տեղեկատվության, տվյալների, ձայնի և պատկերների մշակման և պահման համար. վերոհիշյալ ապրանքների մասեր. սարքեր թվային տեսատվյալների հոսքի համար. ամպային հաշվարկման բեռնվող ծրագրային արտադրանք ձեռնարկությունների, տվյալների հիմնապաշարի կառավարման և տվյալների էլեկտրոնային պահման համար. համակարգչային ծրագրային արտադրանք թվային ֆայլերի կոդավորման և պաշտպանման համար. համակարգչային ծրագրային արտադրանք տվյալների հիմնապաշարի կիրառման և ինտեգրման համար. նախագծման համակարգչային ծրագրային միջոցներ. համակարգչային ծրագրային արտադրանք և ներկառուցված ծրագրային արտադրանք օպերացիոն համակարգի ծրագրերի համար. համակարգչային ծրագրային արտադրանք տեղեկատվության և տվյալների որոնողական հիմնապաշարների ստեղծման համար.

նախագծման ծրագրային միջոցներ շարժական համացանցային կիրառական ծրագրերի և հաճախորդների ինտերֆեյսի ստեղծման համար. համակարգչային ծրագրային արտադրանք էլեկտրոնային առևտրի համար, որը օգտագործողներին թույլ է տալիս կատարել էլեկտրոնային գործարար գործարքներ համաշխարհային համակարգչային ցանցի միջոցով. համակարգչային ծրագրային արտադրանք տվյալների պահոցների ավտոմատացման համար.

դաս 16. բրոշյուրներ տեխնոլոգիական զարգացումների վերաբերյալ համակարգիչների և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում. տպագրված տեղեկագրեր համակարգիչների և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում. տեխնիկական տեղեկագրեր համակարգիչների և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում. տեխնիկական տվյալների տեղեկատվական թերթիկներ համակարգիչների և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում. տպագրական արտադրանք, այն է՝ ապրանքների կատալոգներ համակարգիչների և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում. երրորդ անձանց համար նախատեսված տեղեկագրեր համակարգիչների և ծայրամասային սարքերի գործարկման և գործառնությունների վերաբերյալ.

դաս 35. գործարար խորհրդատվություն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում. գործարար խորհրդատվություն գործերի կառավարման ոլորտում. ռազմավարական պլանավորում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում. համակարգիչների, համակարգչային ծրագրային արտադրանքի, համակարգչային ծայրամասային սարքերի առցանց մանրածախ վաճառքի խանութների ծառայություններ և համացանցի միջոցով պատվիրման

ծառայություններ. ծառայություններ գործարարության ասպարեզում, այն է՝ երրորդ անձանց օժանդակության տրամադրում գործարար կապերի և ձեռնարկատերերի միության զարգացման և բանակցությունների վարման համար. շուկայավարման և խթանման ծառայություններ համակարգիչների և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում. տվյալների հիմնապաշարների կառավարման ծառայություններ. ենթակապալային ծառայություններ (կոմերցիոն աջակցություն) համակարգիչների և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում. ծառայություններ հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարման ոլորտում. էլեկտրոնային առևտրային ծառայություններ, այն է՝ հեռահաղորդակցական ցանցերի միջոցով ապրանքների և ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում գովազդի և վաճառքի նպատակներով. համակարգման ծառայություններ, այն է՝ տվյալների դասակարգում և կազմակերպում հաշվառման գրառումների կառավարման համար. վեբկայքերի տրամադրում համակարգչային ապրանքներ և ծառայություններ վաճառողներին և գնորդներին առցանց առևտրի նպատակով.

դաս 36. ֆինանսական վարձակալման և լիզինգային ֆինանսավորման ծառայություններ. աշխատակիցների առողջապահական և սոցիալական արտոնությունների տրամադրման պլանների մշակում, կառավարում և վարչարարություն. վարկաքարտերով գործարքների մշակման ծառայություններ երրորդ անձանց համար. ապահովագրական փոխհատուցման մշակման ծառայություններ երրորդ անձանց համար. ֆինանսական վերլուծություն և խորհրդատվություն բանկային և ֆինանսական գործառնությունների կազմակերպման և վարչարարության վերաբերյալ.

դաս 37. համակարգչային ապարատային արտադրանքի և հեռահաղորդակցական սարքերի տեղակայում, տեխնիկական սպասարկում և նորոգում.

դաս 38. հեռահաղորդակցական ծառայություններ, այն է՝ ձայնի, տվյալների, գրաֆիկական ֆայլերի, պատկերների, ձայնա- և տեսատվյալների փոխանցում հեռահաղորդակցական ցանցերի, անլար հաղորդակցական ցանցերի և համացանցի միջոցով. տեխնիկական խորհրդատվության տեսքով հեռահաղորդակցական խորհրդատվություն ձայնային, տեքստային և տեսատվյալների փոխանցման և հաղորդակցության ոլորտում. օգտագործողների միջև հաղորդագրությունների փոխանցման համար առցանց զրուցասրահների, հայտարարությունների տախտակների և ֆորումների տրամադրում տեղեկատվական տեխնոլոգիաների և ընդհանուր հետաքրքրությունների ոլորտում. հոսքային տեսատվյալների վերարտադրում համացանցում. համացանցային կանխագրերի միջոցով ձայնի փոխանցման ծառայություններ (VoIP). ֆայլերի համատեղ օգտագործման ծառայություններ, այն է՝ տվյալների էլեկտրոնային փոխանցում համաշխարհային համակարգչային ցանցերի միջոցով.

դաս 41. կրթական և ուսումնական գործընթացի ապահովման ծառայություններ, այն է՝ դասընթացների, վարպետաց դասերի, սեմինարների և կոնֆերանսների անցկացում համակարգիչների, էլեկտրոնային առևտրի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում. առցանց ամսագրեր, այն է՝ համակարգիչների, էլեկտրոնային առևտրի և տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության պարունակությամբ բլոգներ.

դաս 42. համակարգչային ծառայություններ, այն է՝ համակարգչային համակարգերի վերլուծություն, համակարգչային համակարգերի նախագծում, համակարգչային համակարգերի ինտեգրում և համակարգիչների նախագծում. խորհրդատվական ծառայություններ համացանցի ոլորտում, այն է՝ համացանցային պորտալների կատարելագործման հարցերով օժանդակություն երրորդ անձանց համար. համակարգչային անվտանգության հարցերով

խորհրդատվական ծառայություններ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում. համակարգչային ենթակառուցվածքների հոսթինգ, այն է՝ ենթակառուցվածքը որպես ծառայություն (IAAS) երրորդ անձանց համակարգչային ապարատային արտադրանքի, համակարգչային ծրագրային արտադրանքի, ծայրամասային սարքերի տրամադրմամբ՝ բաժանորդագրման կամ յուրաքանչյուր օգտագործման համար վճարման հիմքերով. ծրագրային ապահովման ծառայություն. համակարգչային ծրագրային արտադրանքի նախագծում, տեղակայում, տեխնիկական սպասարկում և նորոգում. համակարգչային համակարգերի և ցանցերի ինտեգրում. տվյալների հիմնապաշարների մշակման և կատարելագործման ծառայություններ. համակարգչային ծրագրերի ստեղծում. վեբ-կայքերում տեղեկատվության տեղակայում, վեբ-կայքերի մշակում երրորդ անձանց համար, ինչպես նաև օգտագործողների կողմից ընտրված տեղեկատվության պարունակությամբ առցանց վեբ-էջերի ձևափոխում, ներառյալ՝ դեպի այլ վեբ-կայքեր առցանց վեբ-հղումների տրամադրում. խորհրդատվական ծառայություններ երրորդ անձանց համար կրիտիկական միջավայրում գործարքների և գործողությունների վերահսկման և կառավարման համար նախատեսված համակարգչային ծրագրային արտադրանքի ընտրման, իրականացման և կիրառման վերաբերյալ. տեխնիկական հարցերով աջակցություն, այն է՝ սպասարկման բաժինների տեխնիկական (սպասարկման) ծառայություններ և ենթակառուցվածքների, համակարգչային ապարատային արտադրանքի, համակարգչային ծրագրային արտադրանքի և համակարգչային ծայրամասային սարքերի անսարքությունների վերացման ծառայություններ. տվյալների հավաքման ծառայություններ. տեղեկատվության կառավարման ծառայություններ, այն է՝ կիրառական ծառայությունների պրովայդերների ծառայություններ գիտելիքների կառավարման ոլորտում համակարգչային աշխատածրագրերի տեղակայման

համար տվյալների և տեղեկատվության հավաքման, խմբագրման, համակարգման, ձևափոխման, կայքանշման, փոխանցման, պահման և համատեղ օգտագործման նպատակով. համակարգիչների անհատական դիզայն երրորդ անձանց համար. տվյալների պահեստային պատճենման և վերականգնման ծառայություններ. տվյալների տեղափոխման ծառայություններ. տվյալների գաղտնագրման ծառայություններ. համակարգչային ծառայություններ, այն է՝ համակարգչային համակարգի կառավարում երրորդ անձնաց համար. համակարգչային ապարատային արտադրանքի և համակարգչային ծայրամասային սարքերի վարձակալման և վարձույթի ծառայություններ. համակարգչային ծառայություններ, այն է՝ ամպային հաշվարկման ծառայություններ ASP (կիրառական ծառայությունների պրովայդերներ) ծառայությունների տեսքով համակարգիչների և սերվերների բաշխված ցանցի միջոցով, որտեղ տեղակայված են երրորդ անձանց արդյունավետ և վարչական աշխատածրագրերը. ծրագրային ապահովմամբ ամպային հաշվարկում տվյալների հիմնապաշարների կառավարման համար. համակարգչային ծառայություններ, այն է՝ մասնավոր և հասարակական ամպային հաշվարկման միջավայրերի ինտեգրում. համակարգչային ծառայություններ, այն է՝ ամպային հոսթինգ-պրովայդերի ծառայություններ. խորհրդատվական ծառայություններ ամպային հաշվարկման ոլորտում. տեխնիկական խորհրդատվական ծառայություններ տվյալների մշակման և պահման կենտրոնի կառուցվածքների, ամպային հաշվարկման հասարակական և մասնավոր լուծումների, ինչպես նաև համացանցային տեխնոլոգիաների և ծառայությունների գնահատման և իրականացման ոլորտում. ամպային հաշվարկման ծրագրային արտադրանքի արդիականացում և սպասարկում առցանց թարմացումների, բարելավումների և ուղղումների միջոցով. խորհրդատվություն համակարգչային ծրագրային ապահովման

վերաբերյալ. համակարգչային ապարատային արտադրանքի և համակարգչային ծրագրային արտադրանքի մշակում. համակարգչային ծառայություններ, այն է՝ տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի և համակարգչային աշխատածրագրերի հեռակա և առցանց կառավարում երրորդ անձանց համար. գործարար-տեխնոլոգիաների ծրագրային արտադրանքի զարգացման և խորհրդատվական ծառայություններ. համակարգչային ծրագրերի ստեղծման ծառայություններ երրորդ անձանց համար համակարգչային ծրագրային արտադրանքի կոնֆիգուրացիայի կառավարման ոլորտում. համակարգչային ծրագրային արտադրանքի զարգացման ծառայություններ շարժական աշխատածրագրերի ոլորտում. խորհրդատվական ծառայություններ ծրագրային ապահովման ոլորտում. համակարգչային ծրագրային արտադրանքի տեղակայում և տեխնիկական սպասարկում. վիրտուալ մասնավոր սերվերում համակարգչային ծրագրային արտադրանքի, վեբ-կայքերի և այլ համակարգչային կիրառական ծրագրերի տեղակայում երրորդ անձանց համար. թվային բովանդակության, այն է՝ պատկերների, տեքստի, տեսա- և ձայնային տվյալների էլեկտրոնային պահման ծառայություններ:

(740) Ալեքսանդր Նահապետյան

(210) 20140328
(220) 10.03.2014

(111) 23721
(151) 01.12.2015
(181) 10.03.2024

(730) Ռեմտսմա Սիգարետենֆաբրիկեն ԳմբՀ, DE
(442) 07.04.2014
(540)



(511)

դաս 34. մշակված կամ չմշակված ծխախոտ. ծխախոտային արտադրանք. ծխախոտի փոխարինիչներ՝ ոչ բուժական կամ բժշկական նպատակների համար. սիգարետներ. սիգարիլներ. սիգարներ. սիգարետներ պատրաստելու ձեռքի մեքենաներ. ծխափողեր. սիգարետի զտիչներ. սիգարետի թուղթ. լուցկի և ծխելու պիտույքներ:

(740) Արարատ Գալոյան

(210) 20141468
(220) 02.10.2014

(111) 23722
(151) 01.12.2015
(181) 02.10.2024

(730) Էբրթ Փրոդաքթս Օփլրեյշնս ԱԳ, CH
(442) 16.12.2014
(540)

ОВАТЕЛЬ

(511)

դաս 10. բժշկական սարքեր և գործիքներ հղիության ախտորոշման և հղիության ընթացքում անալիզների անցկացման համար, սարքեր ձվազատման որոշման և վերահսկման համար:

(740) Արարատ Գալոյան

(210) 20141469
(220) 02.10.2014

(111) 23723
(151) 01.12.2015
(181) 02.10.2024

(730) Էբրթ Փրոդաքթս Օփլրեյշնս ԱԳ, CH
(442) 16.12.2014
(540)

OVATEL

(511)

դաս 10. բժշկական սարքեր և գործիքներ հղիության ախտորոշման և հղիության ընթացքում անալիզների անցկացման համար, սարքեր ձվազատման որոշման և վերահսկման համար:

(740) Արարատ Գալոյան

(210) 20141853
(220) 12.12.2014

(111) 23724
(151) 01.12.2015
(181) 12.12.2024

(730) Փաքնամ, IR
(442) 03.04.2015
(540)



(526) Պարսկերեն գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:
(511)

դաս 3. սպիտակեցնող պատրաստուկներ և այլ նյութեր լվացքի համար. պատրաստուկներ մաքրման, ողորկման (փայլեցման), ճարպազերծման և հղկամշակման համար. օճառներ. օճանելիք, եթերային յուղեր, կոսմետիկական միջոցներ, լոսյոններ մազերի համար. ատամի փոշիներ և մածուկներ.

դաս 35. ներմուծման և արտահանման գործակալություններ. հետազոտություններ շուկայագիտության ասպարեզում. ապրանքների ցուցադրում. ապրանքների առաջխաղացում (երրորդ անձանց համար), գովազդ. ազդագրերի փակցում.

դաս 39. տրանսպորտ (փոխադրումներ). ապրանքների տեղ հասցնում. ապրանքների փաթեթավորում և պահպանում. պահեստների հանձնում վարձակալության, բեռնարկղերի վարձույթ ապրանքների պահպանման համար:
(740) Արարատ Գալոյան

(210) 20141854
(220) 12.12.2014

(111) 23725
(151) 01.12.2015
(181) 12.12.2024

(730) Փաքնամ, IR
(442) 03.04.2015
(540)



(526) Պարսկերեն գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:
(511)

դաս 3. սպիտակեցնող պատրաստուկներ և այլ նյութեր լվացքի համար. պատրաստուկներ մաքրման, ողորկման (փայլեցման), ճարպազերծման և հղկամշակման համար. օճառներ. օճանելիք, եթերային յուղեր, կոսմետիկական միջոցներ, լոսյոններ մազերի համար. ատամի փոշիներ և մածուկներ.

դաս 35. ներմուծման և արտահանման գործակալություններ. հետազոտություններ շուկայագիտության ասպարեզում. ապրանքների ցուցադրում. ապրանքների առաջխաղացում (երրորդ անձանց համար), գովազդ. ազդագրերի փակցում.

դաս 39. տրանսպորտ (փոխադրումներ). ապրանքների տեղ հասցնում. ապրանքների փաթեթավորում և պահպանում. պահեստների հանձնում վարձակալության, բեռնարկղերի վարձույթ ապրանքների պահպանման համար:
(740) Արարատ Գալոյան

(210) 20141855
(220) 12.12.2014

(111) 23726
(151) 01.12.2015
(181) 12.12.2024

(730) Փաքնամ, IR
(442) 03.04.2015
(540)



(526) Պարսկերեն գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:
(511)

դաս 3. սպիտակեցնող պատրաստուկներ և այլ նյութեր լվացքի համար. պատրաստուկներ մաքրման, ողորկման (փայլեցման), ճարպազերծման և հղկամշակման համար. օճառներ.

օճանելիք, եթերային յուղեր, կոսմետիկական միջոցներ, լոսյոններ մազերի համար. ատամի փոշիներ և մածուկներ.

դաս 35. ներմուծման և արտահանման գործակալություններ. հետազոտություններ շուկայագիտության ասպարեզում. ապրանքների ցուցադրում. ապրանքների առաջխաղացում (երրորդ անձանց համար), գովազդ. ազդագրերի փակցում.

դաս 39. տրանսպորտ (փոխադրումներ). ապրանքների տեղ հասցնում. ապրանքների փաթեթավորում և պահպանում. պահեստների հանձնում վարձակալության, բեռնարկղերի վարձույթ ապրանքների պահպանման համար: (740) Արարատ Գալոյան

(210) 20141856 (111) 23727
(220) 12.12.2014 (151) 01.12.2015
(181) 12.12.2024

(730) Փաքնամ, IR
(442) 03.04.2015
(540)

Day

CS

(526) Պարսկերեն գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:
(511)

դաս 3. սպիտակեցնող պատրաստուկներ և այլ նյութեր լվացքի համար. պատրաստուկներ մաքրման, ողորկման (փայլեցման), ճարպազերծման և հղկամշակման համար. օճառներ. օճանելիք, եթերային յուղեր, կոսմետիկական միջոցներ, լոսյոններ մազերի համար. ատամի փոշիներ և մածուկներ.

դաս 35. ներմուծման - արտահանման գործակալություններ. հետազոտություններ շուկայագիտության ասպարեզում. ապրանքների ցուցադրում. ապրանքների առաջխաղացում (երրորդ անձանց համար), գովազդ. ազդագրերի փակցում.

դաս 39. տրանսպորտ (փոխադրումներ). ապրանքների տեղ հասցնում. ապրանքների փաթեթավորում և պահպանում. պահեստների հանձնում վարձակալության, բեռնարկղերի վարձույթ ապրանքների պահպանման համար: (740) Արարատ Գալոյան

(210) 20141907 (111) 23728
(220) 25.12.2014 (151) 01.12.2015
(181) 25.12.2024

(730) «Անդակո» ՍՊԸ, Երևան, Կիևյան 22, բն. 43, AM
(442) 03.02.2015
(540)

WHISKY HOUSE

ՎԻՍԿԻ ՀԱՈՒՍ

(511)

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ, առևտուր:

(210) 20141911 (111) 23729
(220) 25.12.2014 (151) 01.12.2015
(181) 25.12.2024

(730) «Հելլո» ՍՊԸ, Արագածոտնի մարզ, գ. Աշնակ, AM
(442) 03.04.2015
(540)

☑ Done!

(511)

դաս 25. հագուստ, կոշիկներ, գլխարկներ, գուլպաներ:

(210) 20150155
(220) 13.02.2015

(111) 23730
(151) 01.12.2015
(181) 13.02.2025

(730) «Գրանդ քենդի» հայ-կանադական ՀՁ
ՍՊԸ, Երևան, Մասիսի 31, AM
(442) 05.03.2015
(540)

ВОЛШЕБНИК

(511)

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար. բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ, ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց:

(210) 20150156
(220) 13.02.2015

(111) 23731
(151) 01.12.2015
(181) 13.02.2025

(730) «Գրանդ քենդի» հայ-կանադական ՀՁ
ՍՊԸ, Երևան, Մասիսի 31, AM
(442) 05.03.2015
(540)

ВЕРНИСАЖ

(511)

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար. բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ, ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց:

(210) 20150157
(220) 13.02.2015

(111) 23732
(151) 01.12.2015
(181) 13.02.2025

(730) «Գրանդ քենդի» հայ-կանադական ՀՁ
ՍՊԸ, Երևան, Մասիսի 31, AM
(442) 05.03.2015
(540)

VALENTINE'S

(511)

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար. բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ, ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց:

(210) 20150159
(220) 13.02.2015

(111) 23733
(151) 01.12.2015
(181) 13.02.2025

(730) «Գրանդ քենդի» հայ-կանադական ՀՁ
ՍՊԸ, Երևան, Մասիսի 31, AM
(442) 05.03.2015
(540)

ПРАЗДНИК

(511)

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար. բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ, ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց:

(210) 20150160
(220) 13.02.2015

(111) 23734
(151) 01.12.2015
(181) 13.02.2025

(730) «Գրանդ քենդի» հայ-կանադական ՀՁ
ՍՊԸ, Երևան, Մասիսի 31, AM
(442) 05.03.2015
(540)

OPERA

(511)

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար. բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ, ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց:

(210) 20150161
(220) 13.02.2015

(111) 23735
(151) 01.12.2015
(181) 13.02.2025

(730) «Գրանդ քենդի» հայ-կանադական ՀՀ ՍՊԸ, Երևան, Մասիսի 31, AM
(442) 05.03.2015
(540)

DEJA-VU

(511)

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար. բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ, ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց:

(210) 20150162
(220) 13.02.2015

(111) 23736
(151) 01.12.2015
(181) 13.02.2025

(730) «Գրանդ քենդի» հայ-կանադական ՀՀ ՍՊԸ, Երևան, Մասիսի 31, AM
(442) 05.03.2015
(540)

DAYTONA

(511)

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար. բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ, ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ.

մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց:

(210) 20150165
(220) 13.02.2015

(111) 23737
(151) 01.12.2015
(181) 13.02.2025

(730) «Գրանդ քենդի» հայ-կանադական ՀՀ ՍՊԸ, Երևան, Մասիսի 31, AM
(442) 05.03.2015
(540)

АВАНГАРД

(511)

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար. բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ, ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց:

(210) 20150166
(220) 13.02.2015

(111) 23738
(151) 01.12.2015
(181) 13.02.2025

(730) «Գրանդ քենդի» հայ-կանադական ՀՀ ՍՊԸ, Երևան, Մասիսի 31, AM
(442) 05.03.2015
(540)

МОККО

(511)

